

**ՎԵՐԱՎԵՏԱՐԱՆՈՒՄԸ «ՔՐԻՍՏՈՆՅԱ» ՀԱՄԱՅՆՔԵՐՈՒՄ.  
ՕՐԹՈԴՈՔՍ ՄՈՏԵՅՈՒՄ**

**ա) «Քրիստոնյա» համայնքները.** Ակնհայտ է, որ Հյուսիսային կիսագնդում եւ մասնավորապես Եվրոպայում գտնվող հասարակություններն այլեւս քրիստոնեական չեն: Նախկինում քրիստոնյաների թվին էին դասվում մեծամասամբ նրանք, ովքեր պատկանում էին մի որոշակի քրիստոնեական ավանդույթի<sup>1</sup> կամ մի քանի ավանդույթների: Այն ժամանակ հասարակությունները քրիստոնեական էին, քանի որ կրոնը համարվում էր մշակույթի հիմնական մի առանձնահատկություն: 20-րդ դարի վերջում Արեւելյան Եվրոպայում տոտալիտար ռեժիմների անկմամբ պայմանավորված՝ քաղաքական-տնտեսական երկբեւեռ համակարգի վերացումը եւ տեխնոլոգիական ոլորտում տրանսպորտի եւ կապի աննախադեպ զարգացումը հանգեցրին տնտեսության գլոբալացմանը: Ընդամին՝ հեշտացավ տարբեր մշակութային տարրերի շարժը, եւ խրախուսվեց տարբեր պատճառներով մարդկանց զանգվածային գաղթը երկրից երկիր, մայրցամաքից մայրցամաք, կիսագնդից կիսագնդ: Այս կերպ առավելապես քրիստոնեական հասարակությունները դարձան բազմակրոն: Միաժամանակ Եվրոպայի պատմա-քրիստոնեական ավանդույթներին, որոնցից մի քանիսն առաքելական արմատներ ունեն, արդի ժամանակներում տարբեր միջոցներով ավելացվել են բողոքական ուղղության տարբեր նորագույն այլ ճյուղավորումներ: Սովորաբար դրանք ունեն միսիոներական բուռն եռանդ եւ հիմնականում գալիս են Հարավային կիսագնդից<sup>2</sup>, որտեղ եւ վերջին տասնամյակների ընթացքում տեղափոխվել է քրիստոնեության ծանրության կենտրոնը<sup>3</sup>:

Այնուամենայնիվ, այսօր Եվրոպայում քրիստոնեական հնագույն համայնքների բազմակրոն-բազմամշակութային բնույթը պայմանավորված չէ

1 **Ιωάννη Πέτρου**, *Θρησκευτικός Πλουραλισμός και διαθρησκευτικός διάλογος στη σύγχρονη κοινωνία* (**John Petrou**, *Religious Pluralism and Interfaith dialogue in today's society*) <http://ejournals.lib.auth.gr/synthesis/article/view/3922/3949>, retrieved 10/05/2014

2 **Dana L. Robert**, *“Witness and Unity in 21st Century World Christianity”* <http://www.globalchristianforum.org/manado-paper01.html> retrieved 10/05/2014

3 **Hubert van Beek**, *Revising Christian Unity, Revisioning Christian Unity, The Global Christian Forum*, Regnum books International, 2009, p. vii-ix, 3-28

միայն նոր անդամների ավելացումով, որոնք դասվում են առավել աշխարհիկ հասարակությունների մեջ կամ վերապրում են դրանց շրջանակներում: Նույն պատմական եկեղեցիներն աստիճանաբար կորցնում են իրենց հոտը, քանի որ երիտասարդ սերունդը հիմնականում դառնում է անտարբեր, իսկ տարեցները, ոչ հազվադեպ, սահմանափակվում են միայն նախկին ավանդական սովորություններով, որոնք անցյալում կապված են եղել ճշմարիտ Աստծու պաշտամունքի հետ: Այսօր էական բովանդակությունը մոռացության է մատնվել եւ մնացել է միայն նրա մշակութային պատյանը: Շատ են նաեւ նրանք, ովքեր գայթակղվում են կրոնական ղեկավարների ոչ պատշաճ վարքագծով կամ, իրենց հուզող կարեւորագույն հարցերի պատասխանները չստանալով, մեր օրերում գոյություն ունեցող բազմաթիվ ընտրությունների առկայության դեպքում դրանք փնտրում են այլուր:

Այս առումով անցյալի քրիստոնեական հասարակություններն այսօր կարող են համարվել քրիստոնեական միայն ըստ իրենց մշակութային արմատների, քանի որ այլեւս չկան տարբերության նեղ աշխարհագրական սահմանները: Նրանք էլ կարծես անպատրաստ գտնվեցին արդիական դառնալու կառուցողական երկխոսություն զարգացնել ժամանակակից հասարակությունների հետ: Անհրաժեշտ է քաջություն եւ Սուրբ Հոգու լուսավորում՝ բազմադարյա ավանդույթի փոփոխական տարրերը անփոփոխելիից զանազանելու համար:

Վտանգն առկա է՝ եւ՛ անցյալից կառչելու, եւ՛ այն մերժելու պարագաներում:

Նույնիսկ պարզ դիտարկումը հանգեցնում է մասնակի կամ ընդհանուր ապաքրիստոնեացման եզրակացության, երբ հաշվի է առնվում եկեղեցու կյանքով ապրող մարդկանց քանակը, նրանց միջին տարիքը, գործող եկեղեցիների թիվը<sup>4</sup>, եկեղեցու հետ մարդկանց անհատական հարաբերության վերաբերյալ ուսումնասիրությունների պատասխանները, մինչդեռ իրենց անմիջական նախնիներն անդամներն են եղել նույն եկեղեցու:

Այս փաստն ակնհայտ է եւ միաժամանակ ցավալի այն եկեղեցիների համար, որոնք ունեն վաղ քրիստոնեական շրջանին պատկանող խոր արմատներ եւ դրսևորել են հավատի անսասան վկայություն՝ դիմանալով այս աշխարհի իշխանի կողմից պատճառած տառապանքներին, ցավերին եւ հալածանքներին: Ավելին, նրանք ներկայացրել են անցյալից եկող բարձր գեղարվեստական եւ խորիմաստ մտքի կոթողներ:

**բ ) Վերաավետարանում.** Առաջադրված հարցը հստակ է՝ ի՞նչ պետք է լինի:

Պատասխանը հետեւյալն է. չկա խաղաղություն կամ պարտավորություն-

4 [www.patrimoine-religieux.fr/.../eglises.../vivre-autrement-ma-maison-est-une-eglise](http://www.patrimoine-religieux.fr/.../eglises.../vivre-autrement-ma-maison-est-une-eglise) retrieved 20/05/2014

ների փոխանցում<sup>5</sup> պայմանավորված բացառապես արտաքին գործոններով: Ինքնըստինքյան հասկանալի է, որ անհրաժեշտ է վերաավետարանում:

Համաձայն համապատասխան գրականության մեջ հանդիպող սահմանումների<sup>6</sup> առաքելություն (mission) (hiērapōstōli-միսսիոներություն) եւ ավետարանում (evangelism) կամ վերաավետարանում (reevangelism) եզրերն իրարից տարբերվում են հիմնականում ըստ Ավետարանի քարոզության ունկնդիրների: Առաջին պարագային խոսքը վերաբերում է այն մարդկանց, ովքեր ամենեւին չեն ճանաչում Հիսուս Քրիստոսին եւ նրա փրկագործությունը, իսկ երկրորդն այն մարդկանց համար է, ովքեր ունեն քրիստոնեական հավատի մասին որոշակի գիտելիքներ, հիշողություն կամ փորձառություն: Այնուամենայնիվ, վերջինս դժվար զանազանելի է, քանի որ տգիտությունը, շփոթությունը, անտարբերությունը կամ էլ ընդդիմությունը, որ ցուցաբերում են շատ մարդիկ, ելնելով իրենց ունեցած քրիստոնեական մշակութային ակունքներից, ակնառու են: Այսպիսով՝ հարց է ծագում, թե արդյո՞ք եկեղեցիները պետք է զբաղվեն վերաավետարանումով կամ առաքելությամբ ոչ միայն «մինչեւ երկրի ծայրերը»<sup>6</sup>, այլ նաեւ իրենց թաղամասերի սահմաններում: Եվ դա նրա համար, որ երիտասարդ սերունդները ցույց են տալիս բազմաթիվ նմանություններ հեթանոսների հետ՝ որ շրջապատված են մշակութային հրաշալի կոթողներով, որոնք իրենց լուծության մեջ պատմում են, թե ինչ են մարդիկ զգացել Աստծու մեծությունից<sup>7</sup> եւ հետագայում այն դրոշմել արվեստի գործերով:

Այդուհանդերձ, արվեստի լեզուն միշտ չէ, որ անմիջականորեն ընկալելի է: Նրա արժեքները, այսինքն, այն, ինչ տեսնում, լսում կամ մեր ձեռքերով շոշափում ենք, կարող են առաջացնել տպավորություն, հիացմունք կամ հետաքրքրասիրություն, բայց այդ արժեքները հասկանալի դարձնելու պայմանով: Այսինքն՝ դրանք հասկանալու համար անհրաժեշտ է նաեւ ստեղծագործող, ոգեշնչման ու հոգեւոր փորձառության աղբյուր, մարդ, որ ունի պատմական գիտելիք եւ նույն հոգեւոր փորձառությունը: Այդ կերպ, օրինակի համար, երբ որեւէ մի տաճարի, մի սրբապատկերի կամ մի շարականի արտաքին տարրերը պատկանում են վաղ շրջանի ոճերին, առաջադրվող հարցը հետեւյալն է. ինչպե՞ս կարող են դիտողները կամ ունկնդիրներն այսօր գիտակցաբար թափանցել դրանց բովանդակության մեջ՝ զգացմունքային բռնկումից կամ գեղագիտական վայելքից անդին: Անշուշտ, դժվար է, քանի որ ամեն ժա-

5 *Together Towards Life: Mission and Evangelism in Changing Landscapes*, 85, <http://www.oikoumene.org/en/resources/documents/wcc-commissions/mission-and-evangelism/together-towards-life-mission-and-evangelism-in-changing-landscapes>

6 Գործք Ա. 8:

7 "...They led us to the edifices where they worship their God, and we knew not whether we were in heaven or on earth. For on earth there is no such splendour or such beauty, and we are at a loss how to describe it. We know only that God dwells there among men..." *The Christianisation of Russia (988)* <https://community.dur.ac.uk/a.k.harrington/christin.html> retrieved 20/05/2014

մանակաշրջանում արվեստն արտահայտում է մարդու որոնումը, ներկայացնում է տարբեր միտումներ՝ դրանց մեջ տարբեր բովանդակություն դնելով: Հակառակ դրան, այն, ինչ մարդկանցից լսում ենք, երբ նրանք պատմում են «դեպի Քրիստոս իրենց ճանապարհորդության մասին», լի է զարմանալի բաներով: Դա տեղի է ունենում, երբեմն, երբ, օրինակ, երիտասարդները ժամեր են վատնում Տաճարի հրապարակներում, այդ տաճարին սովորաբար ուշադրություն են դարձնում միայն այն ժամանակ, երբ դրա տպավորիչ ժամացույցը ազդարարում է ժամերը, եւ երբ համարձակվում են դռնից ներս մտնել, սկզբում այնտեղ կատարվածի հանդեպ հետաքրքրասիրությունից մղված, որն էլ, սակայն, հետո վերածվում է գիտակցված ընտրության:

Հասկանալի լեզվով ունկնդրին ուղղված բանավոր քարոզը, անկասկած, առաջնակարգ տեղ ունի Ավետարանի ուղերձը փոխանցելու եւ որեւէ մարդու Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու մեջ դասելու հարցում: Հավատքը գալիս է լսելուց<sup>8</sup>, համաձայն խորհուրդը վերապրողների անհատական վկայության, քանի որ մարդկային բոլոր իրավիճակներում բանավոր խոսքը միշտ գերադաս է գրավոր խոսքին: Պողոս առաքյալի այն հարցին, թե ինչպե՞ս կհավատան, եթե չեն լսում<sup>9</sup>, միշտ հետեւում է նույն՝ քարոզի անհերքելի անհրաժեշտության պատասխանը:

Դասական հռետորության<sup>10</sup> մեջ հաշվվում են երեք մնայուն գործոններ, որոնք նպաստում են մարդկային հաղորդակցմանը՝ բանախոսը, ունկնդիրը կամ գրուցակիցը եւ թեման, որին վերաբերում է նրանց քննարկումը: Հետեւելով հաղորդակցման ձեւին<sup>11</sup>, որ տիրում է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տարածված տեխնոլոգիական լրատվամիջոցների լայն օգտագործմամբ, գործոնները, որոնք ազդում են որեւէ հաղորդագրության տարածմանը եւ ընկալմանը, կրկնապատկվել են: Վերոհիշյալ երեք գործոններին՝ բանախոս (հաղորդող, ունկնդիր), ստացող եւ թեմա, ավելացրել են եւս երեքը՝ հաղորդիչ, հաղորդագրություն եւ կանոն, որոնք կիրառվում են յուրաքանչյուր բանախոսության ընթացքում: Ժամանակակից քարոզի համար յուրաքանչյուր գործոն ունի իր կարեւորությունը, սակայն նրանց միջեւ հաջողված համադրությունը հանգեցնում է բավարար արդյունքների:

**զ) Ժամանակակից բազմամշակութային հասարակությունը.** Աշխարհը, որի մեջ տրվում է Քրիստոսով կյանքի վկայությունը, այսօր վայելում է կրոնական ազատությունը<sup>12</sup>, զարգացնում է հարգանքն այլի նկատմամբ, մատու-

8 Հռմ.Ժ. 7:

9 Հռմ. Ժ. 14:

10 Aristotle, *Rhetorica* a, 1356a

11 *International Encyclopedia of Communication*, Oxford University Press 1989, Vol. 3, Models of Communication, p.36-43.

12 John Petrou, The Importance of the World Conference on “Church and Society” its Methodology and its Critical Approach, <http://ejournals.lib.auth.gr/synthesis/article/view/1601/3294>, retrieved 10/05/2014.

ցում է տեսալսողական հաղորդագրությունների բազմություն, հեշտացնում է իրավիճակների արագ փոփոխությունը, բարձրացնում բազմաթիվ ընտրությունների հնարավորությունը: Հակառակ արտաքին վառ դրսևորմանը եւ բազմաբնույթ հաղորդագրությունների ծավալին՝ քիչ տեղ է տրվում ինքնակենտրոնացմանը, խորհրդածության եւ քննական մտածողությանը: Այն ընդունողները տարբեր տարիքի ներկայացուցիչներ են, ովքեր պատասխաններ են փնտրում կենցաղային ճնշող կարիքները հոգալու, սոցիալական անարդարությանը, շահագործմանը, ապականության, բռնության, օտարապետության, մոլեռանդության վերաբերյալ հարցերին, եւ փնտրում են, թե իրենց կյանքն ավելի շատ ինչ նշանակություն ունի «այստեղ եւ այժմ»: Անշուշտ, փնտրում են ներքին իմաստը եւ ներկա աշխարհի ժամանակավրեպությունից դուրս, քանի որ մարդկային բնույթի բաղադրիչներից է ուսումնասիրել Աստծու արարչության սկիզբն ու վերջը:

**դ) Ելք Ավետարանը փոխանցելու համար. հաղորդակցման գործոնները.** Ահա մի սերմնացան ելավ սերմանելու<sup>13</sup>:

Հաղորդիչն այն միջոցն է, որ հաղորդողն ընտրում է իր լսարանին հաղորդագրություն փոխանցելու համար: Նոր Կտակարանում Հիսուս Օրենքը եւ Մարգարեներին մեկնաբանում է այն մարդկանց, ովքեր տեղյակ էին Սուրբ Գրքին, Սողոմոնի տաճարի մեջ, ժողովարաններում, տներում, տարբեր բացօթյա վայրերում (դաշտերում, լճի ափին, լեռան վրա): Հարությունից հետո Տիրոջ հրամանը առաքյալներին, որ աշակերտներն ուսուցանեն բոլոր ազգերին, նպատակ ուներ մեծացնելու հաղորդողների բազմազանությունը: Գործք Առաքելոցում բացի ժողովարաններից, որպես քարոզի վայր, հիշատակվում են Եփեսոսում հնագույն թատրոնը, Փիլիպպեի եւ Կորնթոսի հրապարակները, Աթենքում Արեոս Պագոսը, որ դասական հնության հրապարակային խոսքի հայտնի ամբիոն էր: Այս դեպքերում, շնորհի եւ ճշմարտության Ավետարանը ուղղվում է մարդկանց, ովքեր ունեն անդրանցական Աստծուն<sup>14</sup> որոնելու բնածին զգացում, բայց անտեղյակ են Սուրբ Գրքին: Այս պատճառով էլ ուրախ եւ միաժամանակ բերկրալից նորությունն արձանագրվում է համապատասխանորեն՝ ելնելով փաստերից եւ արտահայտչաձեւերից<sup>15</sup>: Խոսքը վերաբերում է միսիոներական քարոզին<sup>16</sup>, որը դուրս է գալիս մի եկեղեցական համայնքի սահմաններից՝ հանդիպելու նրանց, ովքեր դրսում են, եւ կիսելու նրանց հետ իր մեծ գանձը՝ Աստծուն, որն անգոյությունից մարդկանց տվեց կյանք եւ ազատություն՝ ընտրելու իր հետ հաղորդությունը եւ կամ իրենից հե-

13 Մատթ. ԺԳ. 3:

14 Գործք ԺԷ. 23:

15 D.E. Aune, "Diatribes", *Westminster Dictionary of New Testament and Early Christian Literature*, Westminster John Knox Press, Kindle Edition, Louisville/ London, 2003, Location 3485-3542.

16 Alistair Stewart-Sykes, *From Prophecy to Preaching. A Search for the Origins of the Christian Homily*, Leiden, Brill, 2001, p. 4.

ռացումը: Եվ երբ իրենք կամովին հրաժարվեցին կյանքի աղբյուրից եւ մատնվեցին ապականությանն ու մահվան, Աստված ինքը մարդացավ, որպեսզի նրանց փնտրի: Նա մարդկային բնություն ստացավ, որպեսզի կամավոր սարսափելի չարչարանքների եւ խաչի մահվամբ նրանց կյանք եւ հարություն պարգևի<sup>17</sup>: Հիսուս Քրիստոս, կենդանի Աստծու Որդին, տեսական ընկալում չէ, մարդկային գյուտ չէ, ոչ էլ մի գերակա ուժ՝ թաքնված մարդկային մտքի համար անըմբռնելի ժամանակի եւ անսահման տիեզերքի մեջ: Նա Աստված է, որ հարատեւում է մարդկանց մեջ, որպեսզի նրանց կանչի<sup>18</sup> Իր մարմնի անդամները դառնալու՝ Սուրբ Երրորդության անվամբ մկրտությամբ: Եվ եթե նրանք հաղորդվում են, գործակցում են Սուրբ Հոգու պարգևներին, ապա ստանում են անսպառ ուժ՝ դաժան իրականության դեմ ամենօրյա պայքարի համար եւ քաջություն՝ սիրո, խաղաղության, արդարության եւ հաշտության գործերի համար<sup>19</sup>:

Այդ գանձը Բարի Լուրն է, բարի եւ բերկրալից լուրը, որ եկեղեցիները կոչված են կրկին փոխանցելու մոտ գտնվողներին՝ երբեք չանտեսելով նաեւ հեռվում գտնվողներին<sup>20</sup>: Նրանք դեմառդեմ կհանդիպեն ամենօրյա փոխհարաբերության ժամանակ կամ էլ կօգտագործեն ժամանակակից հաղորդակցության միջոցները ոչ թե նրանց դաս տալու կամ վերահսկելու կամ էլ քննադատելու համար, այլ որպեսզի նրանց առաջարկեն ճանաչել սիրո, ողորմածության եւ գթասարտության Աստծուն, որը նվիրում է հույս եւ ելք ճնշող անելանելիությունից: Առհասարակ դյուրին գործ չէ, քանի որ այն ենթադրում է ազնվություն, ոգեշնչում, պատրաստվածություն եւ տարբեր մոտեցում, ժամանակակից մարդու առջեւ ծառացած խնդիրների վերաբերյալ գիտելիք եւ ամեն ինչից առաջ՝ շփման ընդհանուր կանոն, որպեսզի «օղի մեջ խոսած չլինենք»<sup>21</sup>:

Այդ կանոնը լեզուն է, լեզվական կանոնների համակարգը, որը պետք է ընդհանուր լինի,<sup>22</sup> որպեսզի հասկանալի դառնա գրույցի բովանդակությունը: Ինքնըստինքյան հասկանալի է, որ երբ ինչ-որ մեկը խոսի միայն իսպաներեն, իսկ նրա գրույցակիցը՝ միայն շվեդերեն, ապա նրանց միջեւ բանավոր փոխհասկացություն չի լինի: Գուցե նրանք կարող են շփվել ժեստերի եւ ընդհանրապես մարմնի լեզվով<sup>23</sup>, սակայն լեզվական հաղորդակցությունը, որ բացառապես բնորոշ է մարդկանց, ունի առաջնային նշանակություն: Լեզուն

17 St John Chrysostom, *Divine Liturgy*, Prayer of Anaphora.

18 Մատթ. 11.28

19 Բ. Կորնթ. Ե. 18:

20 **Archbishop Anastasios**, *Mission in Christ Way*, Holy Cross Orthodox Press, World Council of Churches Publications, 2010, p. 25-41.

21 Ա. Կորնթ. ԺԴ. 9:

22 **André Martinet**, *Cours de Linguistique Générale*, Armand Colin, Paris, 1970, p. 6-21.

23 **Pierre Guiraud**, *La Sémiologie*, Presses Universitaires de France, Paris, 1973, p. 60.

արտահայտում է մարդկային փորձառությունը եւ բաժանված է երկու մակարդակների՝ նշանակության եւ բառիմաստի: Այդ ամենով հանդերձ՝ շատ հնարավոր է, որ գրուցակիցները պատկանեն նույն լեզվական հասարակությանը, ճանաչեն հնչյունները, բայց անգիտանան կամ տարբեր կերպ հասկանան դրանց նշանակությունը:

Հաճախ լսում ենք, թե եկեղեցին պետք է ընդունի երիտասարդների լեզվի կանոնը, եւ քիչ չի պատահում, երբ ուլքեր նրանց մոտենում են, կիրառում են իրենց սեփական լեզուն կամ ընդհանուր շփման բարբառը: Այսինքն՝ հատուկ նշանակությամբ այնպիսի բառեր, արտահայտություններ կամ բացականչություններ, որոնց երիտասարդները հատուկ իմաստ են տալիս: Մոտեցման այս մեթոդը կարող է ստեղծել բարենպաստ զգացմունքային ընկերություն<sup>24</sup>, սակայն կարող է գործել միայն որպես սկիզբ: Հետագայում երիտասարդների բառապաշարի գործածումը չէ, որ պիտի շահի նրանց հետաքրքրությունն ու վստահությունը, այլ անկեղծությունը եւ քարոզվածի ու քարոզիչի ամենօրյա կյանքում այդ սկզբունքների կիրառության համաձայնեցումը:

Սերմնացանի առակում սերմն ընկնում է մի ամբողջ արտի մեջ, սակայն արտի բոլոր մասերը հավասարաչափ բերրի չեն, ուստի հարկավոր է նաեւ հատուկ խնամք եւ մշակում: Քանի որ «այն խորհուրդը, որ թաքնված էր դարերով եւ մեր սերունդների համար, այժմ հայտնվեց հավատացյալներին: Աստված նրանց ցանկացավ հայտնել, թե ինչքան շքեղ եւ փառավոր է այս խորհուրդը, որ տարածվում է նաեւ հեթանոսների վրա: Եվ այս խորհուրդը Քրիստոս է, որը գտնվում է մեր մեջ եւ հանդիսանում է գալիք փառքին մասնակիցների հույսը»: Պողոս առաքյալն իր նամակի շարունակության մեջ շեշտում է, թե որքան ջանք է հարկավոր՝ խորհուրդ տալով եւ ուսուցանելով, մինչեւ որ ամեն մարդ Հիսուսի օրինակով կատարյալ դառնա<sup>25</sup>:

**ե) Երկխոսություն մտավորականության հետ: Յուդադրական օրինակ դեռեա չպառակտված Եկեղեցու կարեւոր մի ժամանակաշրջանից.** 1700 տարի առաջ, երբ Միլանի հրովարտակով (313) դադարեցին քրիստոնյաների դեմ հալածանքները, Ավետարանի պատգամի տարածումը ներառեց նաեւ մտավորականների ամենադժվար խմբերին՝ հատկապես այդ ժամանակաշրջանի հռետորներին ու փիլիսոփաներին: Նրանց համար Խաչի մասին խոսքը հիմարություն էր<sup>26</sup>, քանի որ այն ենթադրում է Հայտնության խոսքի ազատ ընդունում, այլ ոչ տրամաբանական փաստարկներով ապացուցում, որպեսզի «ձեր հավատը չլինի մարդկանց իմաստությամբ»<sup>27</sup>:

Նույն կերպ էլ անարժեք էին համարվում քրիստոնյաների սուրբ գրքե-

24 Cicero, *De Inventione*, exordium (proemium), captatio benevolentiae.

25 Կող. Ա. 28-29:

26 Ա. Կորնթ. Ա. 18:

27 Ա. Կորնթ. Բ. 4:

րը, որոնց պատճառը նրանց լեզվի կանոնն էր՝ ձկնորսների խոսակցական լեզուն (հունական կոյնեն) եւ պարզ ոճը՝ առանց ոճական եւ հռետորական բարդ ձեւավորումների: Այդ ժամանակաշրջանում այս երկու արտահայտչաձեւերն էլ ոչ մի հավաստում չունեին մտավորականների կողմից, որպեսզի արտահայտեին բարձր գրականության (Hoch Literatur) որեւէ ոճ, որեւէ բարձր իմաստ եւ դրանով իսկ՝ ավելի քիչ ճշմարտություն:

Դ. դարում՝ Եկեղեցու հզորացման համար այս վճռորոշ ժամանակաշրջանում, դեռեւս չպառակտված Եկեղեցու մեծ վարդապետների երկխոսությունը մտավորականների հետ հիմնվել է ընդհանուր կանոնի որդեգրման վրա<sup>28</sup>: Նրանք իրենք էլ ուսանել էին հեթանոսների հետ նույն դպրոցներում եւ փիլիսոփայական մտքի ու հռետորական արվեստի փայլուն գիտականեր էին: Սակայն նրանք ունեին նաեւ խորը հոգեւոր փորձառություն Քրիստոսի լույսով, որը փայլում է մարդկանց սրտերում եւ բացում է մտքի աչքերը<sup>29</sup>, որպեսզի ավետարանի լուրը հասկանալի լինի ամեն ժամանակաշրջանում: Հենց այս կենարար հավատը նրանց տարբերեց իրենց հեթանոս համադասարանցիներից եւ հռետոր ու փիլիսոփա ուսուցիչներից Դ. դարում, հատկապես Միջերկրայքում: Դրա համար եթե որեւէ մեկը համեմատի անվանի հռետոր Լիբանիոսից<sup>30</sup> փրկված գործերն Անտիոքի մեծ քաղաքում գործած իր աշակերտի՝ Սուրբ Հովհաննես Ոսկեբերանի երկերի հետ, կհայտնաբերի նույն լեզվական կանոնները եւ հռետորական ձեւակերպումների անգույնական օգտագործումը,<sup>31</sup> նույնիսկ հանդիսատեսների ոգեւորված ծափահարությունները<sup>32</sup>: Բայց մեկը կիրառում է համոզումների հասանելի միջոցները՝ բարձր իմաստները շեշտելու համար, իսկ մյուսը դրանք օգտագործում է, որպեսզի հայտնի դարձնի Սուրբ Գիրքը եւ բացահայտի հենց իր կողմից վերապրած Աստծու հրաշքները: Նրանց տարբերության հատկանիշներն են՝ Սուրբ Հոգու լուսավորումը, կրակը, ջերմությունը եւ ընդարմացումը:

Տեղին է նշել, որ Դ դարում հռետորներն ու սովետները հասարակական մեծ հեղինակություն ունեին, քանի որ հնչեցնում էին հասարակական խոսքը եւ ձեւավորում էին իրենց ժամանակի ընդհանուր կարծիքը: Նրանք ունեին այսօրվա քաղաքական գործիչների դերը, ովքեր եւս լռորեն են նկատի առնում որեւէ խոսքի արտահայտման վերաբերյալ հռետորական պահանջները՝ կարեւորելով ձայնի կարգավորումը եւ մարմնի շարժումները<sup>33</sup>: Նույն կերպ Ավետարանի բազմաթիվ ժամանակակից քարոզիչներ կիրառում են քաղա-

28 George Kustas, *Studies in Byzantine Rhetoric*, Analecta Vlatadon, Thessaloniki, 1973

29 Θεία Λειτουργία Ιωάννου Χρυσοστόμου, ευχή προ του ευαγγελίου

30 A.J. Festugière, *Antioche païenne et chrétienne*, Libanius, Chrysostom et les moines de Syrie, Paris, 1971.  
G.V. Bowersock, *Greek Sophists in the Roman Empire*, Oxford, 1969.

31 A.M. Patterson, *Hermogenes and the Renaissance. Seven Ideas of Style*, Princeton, N.J 1970.

32 Eusebius, *Historia*, 7, 30.

33 Cicero, *De Inventione*, pronuntiatio (performance), vocis figura (figure of the voice), corporis modus (mode of the body)

քական գործիչների համապատասխան արտահայտչաձևերը՝ իրենց լսարանի ուշադրությունը գրավելու համար, որն արդեն հակված է լսելու եւ հետեւելու քաղաքական գործիչներին:

Անհրաժեշտ է նաեւ նշել քաղաքական գործիչների եւ եկեղեցական հռետորների տարբերությունը, որը սահմանված է Դ. դարի քրիստոնյա մեծ հռետոր եւ փիլիսոփա<sup>34</sup> Գրիգոր Աստվածաբանի կողմից.

«դավանաբանորեն, այլ ո՛չ հակաճառորեն,

ձկնորսային, այլ ո՛չ արիստոտելյան,

հոգեւոր, այլ ո՛չ չարագործաբար,

եկեղեցականորեն, այլ ո՛չ հրապակային,

օգտակար, այլ ո՛չ ցուցադրական»<sup>35</sup>:

Դ. դարի եկեղեցու մեծ վարդապետների նպատակը հստակ էր՝ իրենց գրուցակիցներին ծանուցել մարդկային մտքի սահմանները, որը փնտրում է Աստծուն եւ Աստծու անվերապահ սերը. Մեր, որ ինքն է գալիս փնտրելու մարդուն<sup>36</sup>:

Այս ճշմարտությունները հեշտությամբ չեն ընկալվում մտքի կողմից: Հիսուս հստակ ասում է, որ ովքեր մաքուր սիրտ<sup>37</sup> ունեն, ավելի լավ կընդունվեն Քրիստոսով փրկության խորհրդի մեջ, եւ նրանք պիտի տեսնեն Աստծուն: Եկեղեցու պարտականությունն է ստեղծագործական ճանապարհով հարաբերվել բոլորի հետ: Անշուշտ, նաեւ նրանց հետ, ովքեր մնում են այն սահմանում, որքան ներում է մարդկային սահմանափակ միտքը, եւ նրանց հիշեցնել, թե որքան կարող է տանել սիրով լի մարդկային սիրտը՝ նույն անհասանելի Աստծուն եւ բոլոր մարդկանց՝ առանց բացառության:

Դ. դարի աստվածագայաց վարդապետների, ինչպես նաեւ Թ. դարի Սրբեր Կյուրեղի եւ Մեթոդիոսի առաքելության բացառիկ օրինակը դարերի ընթացքում շարունակում են միշտ փայլել եկեղեցու կյանքում եւ մատուցել վստահելի չափանիշ հետեւյալ թեմայի վերաբերյալ՝ Ավետարան եւ մշակույթ:

**զ) Հաղորդակցման ժամանակակից հաղորդիչները.** Մեր ժամանակաշրջանը նշանավոր է հատկապես թվայնացված միջոցների մեծաքանակությամբ, որոնք շարունակ բարելավվում են եւ կարող են պատկերով եւ խոսքով հաղորդագրություններ փոխանցել «մինչեւ աշխարհի ծայրը»: Այս աննախադեպ եւ նշանակալից հնարավորությունները համապատասխանաբար ազդում են շփման բոլոր գործոնների վրա: Անհամբիլի աստիճանով աճում է հեռարձակվող հաղորդումների, ունկնդիրների, հաղորդագրությունների եւ կանոնակարգող համակարգերի թիվը: Իհարկե, այս միջոցներին հասանե-

34 R.R. Rosmary Ruether, *Gregory of Nazianzus. Rhetor and Philosophus*, Oxford, 1969.

35 Γρηγορίου Ναζιανζηνού, Or. 23,12, PG 35,1164 CD

36 Gregorius Nazianzus, Or. Theol. PG 36, 13CD, 25A.

37 Մատթ Ե. 8:

լիությունը երկրի բոլոր բնակիչների համար հնարավոր չէ, քանի որ ենթադրում է վարժվածություն դրանց օգտագործմանը, որը, ընդհանուր առմամբ, հնարավոր չէ ծերերի համար, ինչպես նաև բացակայում են ֆինանսական միջոցներ դրանց ձեռքբերման համար: Այնուամենայնիվ, դրանք ավելի ու ավելի են տարածվում:

Անշուշտ եկեղեցիները շփման միջոցներն օգտագործում են՝ փոխանցելու համար իրենց հաղորդագրությունները, ուսուցումները, իրենց գործունեությունը եւ հոգածությունը սոցիալական խմբերի նկատմամբ: Ինչպես նաև մշակվում է առանձնահատուկ երկխոսություն որեւէ եկեղեցու անդամների կամ այլ շահագրգիռ անձանց միջև: Այս կերպ եկեղեցու անդամները ոչ միայն ամրանում են հավատքի մեջ, այլեւ բազմաթիվ այլ օտարվածներ կամ անտարբեր մարդիկ իրենց փնտրտուքների մեջ գտնում են իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները: Անշուշտ, այնքանով, որքանով որ չեն կարողանում տարբերել ճշմարիտը հաղորդագրությունների տարափի միջից եւ ինտերնետում հայտնվում են միայն մեկ հրամանով:

Համակարգչային ժամանակակից այս միջոցներով «Գործք Առաքելոց» միսիոներական քարոզությունն ունի անգուգական հնարավորություններ՝ փոխանցվելու բազմաթիվ ունկնդիրներին՝ բազմակի արագությամբ: Բայց այն, ինչ մնում է անփոխարինելի, դա մարդկային ներկայության վճռորոշ նշանակությունն է հաղորդագրությունների փոխանցման եւ ընդունման մեջ: Առանց թերագնահատելու նրանց կարեւոր մատուցումը՝ ժամանակակից միջոցները չեն դադարում լինել անուղղակի հաղորդիչներ, որոնք չեն ապահովում դեմադեմ կապը բանախոսի եւ իր զրուցակցի միջև: Կարող է լսվել ձայնը, նրանք կարող են զրուցել միմյանց հետ՝ էկրանի մոտ աշխարհի մի ծայրից մյուսը, այնուամենայնիվ, նրանք անմիջական կապ չունեն: «Ծառ» բառի առաջին իմաստը, որ քարոզխոսության մեջ ցույց է տալիս քրիստոնեական քարոզը, ինչպես որ ձեռավորվել է հետառաքելական ժամանակաշրջանում, դա «համահաղորդակցությունն» է<sup>38</sup>: Ավետարանական համար համահաղորդակցությունը հատուկ կարեւորությունի ունի: Բանախոսի վարքը<sup>39</sup>, հետեւողականությունը, նվիրվածությունը եւ առաջին հերթին Սուրբ Հոգու շունչը<sup>40</sup>, որով լցված է նրա կյանքը, անհատական շփմամբ դառնում են ավելի զգալի: Ավետարանի ճշմարտությունն ընկալելի է դառնում նրանց կյանքից, ովքեր այն ընդունել են, քարոզում եւ կիրառում են. «Այս բանը տեսնողը վկայեց»<sup>41</sup>:

**Է) Աշակերտությունից մկրտություն.** Հեթանոսներին ավետարանելու

38 <http://stephanus.tlg.uci.edu/lsg/#eid=1&context=lsj> The Online Liddell-Scott-Jones Greek-English Lexicon

39 Aristotelis, *Rhetorica*, 1355 b sqq

40 John Chrysostom, *De Sacerdotio*, PG 48,15

41 Հովհ. ԺԹ. 35:

Հիսուսի պատգամը, որ ակնհայտորեն վերաբերում է նաեւ վերստին ավետարանելուն, ցույց է տալիս երկու ուղի՝ ուսուցանում եւ մկրտություն<sup>42</sup>:

Առաջինը հավատացյալների ելքն է համայնքից՝ հանդիպելու հեթանոսներին եւ փոխանցելու բարի լուրը՝ Քրիստոս Աստված «մարդկանց փոխադրեց մահից դեպի կյանք եւ երկրից դեպի երկինք»<sup>43</sup>:

Եվ երկրորդը եկեղեցու մեջ կամավոր մուտքն է յուրաքանչյուրի, ով կհավատա այդ կենարար ճշմարտությանը: Քրիստոսի մարմնի մեջ ներթափանցելու խորհուրդը մկրտությունն է, բայց որպեսզի նոր լուսավորվածը քայլի «նորագույն կյանքում»<sup>44</sup>, հարկավոր է նրա ազատ համագործակցումը Սուրբ Հոգու շնորհներին: Սուրբ Հոգու պտուղները բողբոջում են հոգեւոր մշակությամբ եւ կրքերի դեմ պայքարով, որոնք մթազնում են միտքը եւ տանում դեպի Աստծու պատվիրանների խախտում ու մեղք: Եւ լույսի գործերի ու նվիրական սիրո փոխարեն, ովքեր ձախողվում են այս ընթացքի մեջ, ընկնում են խավարի գործերի մեջ, որ է եսասիրությունը եւ ամբարտապանությունը: Իհարկե, միշտ կա ապաշխարությամբ եւ բուժմամբ դարձի ճանապարհ: Հիսուս հաստատում է. «Նա, ով ուտում է իմ մարմինը եւ խմում իմ արյունը, ապրում է իմ մեջ, եւ ես նրա մեջ»:

**ը) Սուրբ Պատարագը եւ «Պատարագից հետո պատարագը».** Սուրբ Պատարագն Աստծու ժողովրդի երախտագիտությունն է նրա անհամար պարգեւների համար<sup>45</sup>: Այն հիշատակն է Հիսուս Քրիստոսի փրկագործության, աստվածային տնտեսության խորհրդի, որը Սուրբ Հոգու ներգործությամբ գործում է որպես մեղքից եւ մահվան ենթակայությունից ազատագրող ներկա իրողություն Քրիստոսի կենսատու մարմնին եւ արյանը հաղորդակցվողների համար:

Չարի ուժերից, կործանումից եւ ապականությունից ազատագրումը մի րուպեական հոգեւոր վերելք չէ, որը տեսնում է այնքան ժամանակ, որքան որ ձգվում է Սուրբ Պատարագը եկեղեցում: Դա մի շարժիչ ուժ է, որը դրդում է հավատացյալներին դուրս գալ դեպի հասարակություն, որպեսզի կատարեն «պատարագը պատարագից հետո» առօրյա կյանքում, այն բոլոր ոլորտներում, որոնք աշխատում են «մարդկանց բոլոր անարդարության շահագործման, պայքարի, միայնակության դիվային շերտերից ազատագրելու նպատակով եւ ստեղծելու միմյանց սիրող անձանց մի իրական հասարակություն»<sup>46</sup>:

Ժամանակակից հասարակության մեջ, որտեղ կրոնն արդյունք է ոչ թե օրենքից կամ մշակույթից բխող պահանջի, այլ մարդկանց ընտրության, եկե-

42 Մատթ. ԺԸ. 19:

43 Ιωάννου Δαμασκηνού κανόνας (ὕμνος) του Πάσχα, Ωδὴ 1<sup>η</sup>)

44 Հռոմ. Զ. 4:

45 **Alkiviadis Calivas**, *Essays in Theology and Liturgy, Vol. 4 Church, Clergy, Laity and the Spirit Life*, Holy Cross Orthodox Press 2013, p. 73-75.

46 **Anastasios**, *Mission*, p. 94-96.

ղեցին ունի պաշտպանված իրավունքներ, որոնք նրան թույլ են տալիս փոխանցելու իր հաղորդագրությունը շփման հասանելի բոլոր միջոցներով եւ բոլոր հնարավոր նշանագրային կանոններով<sup>47</sup>: Հավատացյալները կարող են բարձրացնել իրենց բողոքի ձայնը, ի թիվս այլ հասարակական խմբերի, ատելության, անարդարության եւ շահագործման դեմ, որոնք ոչնչացնում են բնական միջավայրը, ռմբակոծությամբ հողին են հավասարեցնում քաղաքներն ու գյուղերը, որոնց ավերակների տակ թաղվում են բազմաթիվ կյանքեր: Նրանք կարող են քննադատել մարդկային արժանապատվության արժեզրկումը, մարդու իրավունքների խախտումը, մարդկային արժեքների փոխարինումը դրամականով եւ շուկայականով: Կարող են թեթեւացնել մարդկային տառապանքները եւ դառնալ այն մարդկանց խնդիրներին, որոնք տառապում են տարբեր ձեւերով, եւ Քրիստոս նույնացվում է նրանց հետ<sup>48</sup>: Նրանք կարող են տալ տեսական, հույս եւ իմաստ՝ մարդկանց կյանքի համար:

Հասարակության մեջ հավատացյալների այս աշխատանքը ենթադրում է Սուրբ Հոգու լուսավորություն, հաղորդակցություն լույսին<sup>49</sup>, որ ճառագեց Հարուցյալ Քրիստոսի գերեզմանից, Խաչից եւ Հարությունից: Այդ կերպ կփայլի նրանց լույսը մարդկանց առջեւ, որպեսզի տեսնեն իրենց գործերի բարիքները եւ փառաբանվի «Հայրը մեր, որ երկնքում է»<sup>50</sup>:

Հունարենից թարգմանեց Մարիաննա Ապրեսյանը  
(պ.գ.թ., Թեսալոնիկեի համալսարանի  
Աստվածաբանության դոկտոր)

47 Jean Martinet, *Clefs pour la Sémiologie*, Seghers, Paris, 1975.

48 Մատթ. ԻԵ. 40 :

49 Դուկ. ԻԴ. 4:

50 Մատթ. Ե. 16:

### ԴԻՄԻՏՐԱ ԿՈՒԿՈՒՐԱ



Դիմիտրա Կուկուրան ծնվել է Թեսսալոնիկեում (Հունաստան) եւ ավարտել տեղի Արիստոտելի անվան համալսարանը: Այնուհետեւ իր կրթությունը շարունակել է լեզվաբանության, հայրաբանական ճարտասանության եւ աստվածաբանության ոլորտներում եւրոպական մի քանի համալսարաններում (Ռ. Դեկարտի անվան Փարիզի Ե. համալսարան, Փարիզի Ա. համալսարան (Պանթեոն), Փարիզի կաթոլիկ համալսարան եւ Թեսսալոնիկեի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետ): 1981-1993 թթ. միջնակարգ եւ ավագ

դպրոցներում հին եւ նոր գրականություն դասավանդելուց հետո՝ 1993թ. ընտրվում է Թեսսալոնիկեի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի Քարոզխոսության եւ ժամանակակից հաղորդակցման միջոցների ամբիոնի պրոֆեսոր: Պրոֆեսոր Դ. Կուկուրան ակտիվ մասնակցություն է բերում նաեւ միջեկեղեցական երկխոսություններին՝ թե՛ եւրոպական (Եւրոպական Եկեղեցիների Խորհուրդ) եւ թե՛ միջազգային (Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ) մակարդակով: Վեց մենագրության հեղինակ է: Ներկայումս նրա հետազոտությունների շրջանակը Քրիստոնեական պատգամի տարածման եւ ժամանակակից հաղորդակցման միջոցների փոխհարաբերությունն է:

### DIMITRA KOUKOURA

Born in Thessaloniki-Greece, Dimitra koukoura studied in Thessaloniki - Aristotle University of Thessaloniki (BA in Linguistics, BA in Theology, PhD in Patristic Rhetorics, Faculty of Theology) and Paris - Université René Descartes Paris V (Maitrise + DEA Linguistics and Social Linguistics), Université Paris I - Panthéon (DEA Byzantine History), Institut Catholique de Paris (DEA Theology). Pr. Koukoura worked as a professor of Ancient and Modern Greek Literature at the Secondary Education (1981-1993). In 1993, she was elected lecturer on Homiletics and Communication at the Department of Theology - Aristotle University of Thessaloniki, the very first woman at that time among 35 male teaching staff of the Department. Currently she is a full time Professor and teaches Homiletics and Church Communication, Rhetorics, Introduction to Theology, and Women's Issues.

Her publications include six books, written in Greek, in her field of academic expertise and a lot of articles in Greek, English, and other languages on homiletics and ecumenical issues. She has been involved in the ecumenical movement for the 28 last years under different capacities (resource person, advisor, counselor, facilitator, etc) in various programs (Mission and Evangelism, JPIC, Combat Against Racism, Women's Decade, Faith and Order).

Koukoura attended the last four WCC Assemblies and as member of the Commission Churches in Dialogue the CEC Assembly (Lyon 2009) and CEC-CCEE (Sibiu 2007). Representing the Ecumenical Patriarchate, she was a member of the Faith and Order Plenary and Standing Commission and acting member of the WCC Central Committee and the stirring Committee of the (WCC), Academic Committee of Elijah Interfaith Institut and Stiring of Global Christian Forum. She is also member of Societas Homiletica and ESWTR.

Her main academic focus is on the dissemination of the Gospel message in the modern world, and the investigation of communication factors affecting its reception and espousal.

The present article reflects on the issue of the Reevangelisation in the "christian" communities. It includes reflections and analyzes on the issues of: a) "christian" communities in Europe, b) Reevangelization, c) Modern multicultural society, d) the modes of communication, e) dialogue with the intelligentia, f) modern issues of communication, g) and the role of Batism and Eucharist in the modern society.